

Հայոս Յեղ ՀՄԻԵՆ ԳԵԶՐ-ԾՎԵՐԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵԶՐ-ԱՎԻՍՔԻՄ ԽԵԶՄ-Ի ԽԱՂԱՋ ԱՇԽԱ-
ՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՅՈՐԱՆՆ Ե

№ 9

ՔԻՄԻԱՅԻ ԴՈԿՏՈՐ ՅԱ. ԳԻԵՄԱՆ

ԳԻՄԻԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

623 459

Ֆ - 59

«ՊԵԶՐ-ԱՎԻՍՔԻՄ»-Ի ՀԲԸՆՔՆԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԵԳԸՆ

1980

06 SEP 2013

13-422

04 AUG 2010

**ՀԱԽՀ ՊԱԶԸ-ԱՎԻԱՖԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅԹԱՄ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԳԵՐԸ**

ԿՊՊ.

1. Ա. ԲԱԴԻԱՍԱՐՅԱՆ — «Սովորիր ռազմական գործը»	25
2. ԼԻՑՈՎՅԵՆ. — «Տեխնիկան պատերազմում»	13
3. ՊԱԶԸ-ԱՎԻԱՖԻՄԻ ՔԺԸՆԵՐԻԲ կից ոդա-ֆիմիա- կան պաշտպանության խմբակներ (ծրագիր և կազմակերպչական մեթոդական խնդիր- ներ)	10
4. Բանաձևեք ՀՍԽՀ ՊԱԶԸ-ԱՎԻԱՖԻՄԻ Հայա- տանիան 2-րդ համագումարի	5
5. ՌՈԶԱՆՈՎ. — «Է՞նչ և ինչպես պետք է ամեն մողելիստների խմբակներում»	10
6. Վ. ՅԵՅՏԵՐ. — «Աղավնիները ռազմական ծառայության մեջ»	10
7. Ա. ԲԵԼՈՎ. — «Ինչպես սովորել հրացանով նիշտ կրակել»	10
8. Վ. ՅԱԶԻԿՈՎ. — «Շունը ռազմական ծառա- յության մեջ»	15
9. Ա. ԲԱԴԻԱՍԱՐՅԱՆ. — Հայկական Դիվիզիոնի սեցյանից	20

ԱԹԻՆ ՅԵՎ ՀՅՈՒՇ ՊԱԶԸ-ԱՎԻԱՖԻՄ ՀՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

623-959

ՊԱԶԸ-ԱՎԻԱՖԻՄ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՀ ԱՇԽԱ-
ՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՐԱՆ Ե


Փ-59

Ար

№ 9

ՔԻՄԻԱՅԻ ԴՈԿՏՈՐ ՅԱ. ԳԻՉՄԱՆ

Ք Ի Մ Ի Ա Ն
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ



Ի՞՞ՆՉ Ե ՔԻՄԻԱՆ

Մարդկությունը քիմիայի վերաբերյալ գործնական
դիտելիքներ ե ունեցել անհիշատակ ժամանակներից ըստ-
կամած։ Իր աշխարհ դալուց սկսած մարդն սկսել ե իր
չըջապատի առարկաները ձեւափոխել այնպես, վոր նը-
րանք իր համար լինեն ոգտակար։

Բնության հանդեպ մարդու կատարած ամենառաջին
հաղթանակը յեղել ե փայտից կրակ ձեռք բերելը։ Կը-
րակը մարդուն պետք եր զանազան նյութերի մշակու-
թյան, կերակուր յնիկելու, ցուրտ որերին տաքանալու,
վայրենի գաղաններից պաշտպանվելու համար և այլն։

Սյապես ե սկսվել առաջին քիմիան։

Հետադայում, դեռևս հին ժամանակներում, մար-
դիկ սովորեցին ոգտվել շատ բաներով, վորոնք յերկրի
խորքերում են գտնվում։ Մետաղ պարունակող մի տե-
սակ հողից հանքից մարդիկ ձեռք բերեցին դարբնվող
յերկաթը, վորն անհրաժեշտ եր նրանց՝ զանազան իրեր
և գործիքներ պատրաստելու համար։ Հողի մյուս տե-
սակներից պատրաստեցին ցեմենտ, վորն անհրաժեշտ
և շենքերի կառուցման համար։

Դեռևս շատ վաղուց մարդիկ կարողանում եյին
նույնպես պատրաստել մի շարք այլ տեսակի մետաղ-
ներ, ստանալ ծծումք, պատրաստել քացախ, մոխրից՝
պօտաշ, բույսերից՝ մի շարք ներկեր և դեղեր, հա-
տիկներից՝ շաքար, սպիրտ և այլն։

ՀԱՅՈՒԼԻԳՐԱՖԻ ՏՄԱՐԱՆ
Պատվեր № 4316
Դռարեակալսվար 2286 (բ)
Տիրաժ 2000

Սակայն Քիմիայի վերաբերյալ սկզբնական դիտական շատ շատ տեղեկություններ են ձեռք քցել այն ժամանակվա ջուրմ-տերտերները, վորոնք իրենց դիտելիքներն ողափործում եյին խավար ժողովրդական մասսաներին հիմարացնելու համար։ Քիմիայի միջոցով ջուրմերը՝ մնալաշտությամբ հիմարացած դյուրահավատ մասսային ցույց եյին տալիս զանազան «հրաշքներ»։ արյունը բաժակում դարձնում եյին ջուր, կանաչ խոտը հանկարծ սպիտակ եյին դարձնում և այլն։

Սակայն, ժամանակի ընթացքում քիմիան վորպես դիտություն, դադարեց արդեն սակավ մարդկանց սեփականությունը դառնալուց։ Քիմիայի վերաբերյալ դուրություն ունեցող տեղեկությունները ներս թափանցեցին ժողովրդական խիստ շերտերը և առանձնապես կյանքի համար պիտանի շատ բաներ սկսեցին հայտնի դառնալ բոլորին։

Քիմիան աստիճանաբար մուտք գործեց մարդու կյանքի բոլոր անկյունները։ Այժմ արդեն վոչ մի տեղ և վոչ մի բանում—լինի դա պատերազմի, թե խաղաղ ժամանակ— առանց քիմիայի վոչինչ չեն կարող անել։

Քիմիայի միջոցով հանքը փոխվում, դառնում է մետաղ-յերկաթ։ Վերջնից պատրաստում են գերանդիներ, գութաններ, ցաքաններ, մեխեր, պայտեր և այլն։

Քիմիայից ոգովելով բնափայտից (Ճրեւսինա) ստանում են ձյութ, վորը քսում են անիվների, նավթից կերոսին և բննդին են հանում, հացից՝ սպիրտ, զանազան քարերից՝ դեղեր և ներկեր։

Եեվ նույն այլ «հրաշագործ» քիմիան և, վոր պարագանում և դաշտերը, բարձրացնելով այդպիսով

նրանց մերժատվությունը և դյուզացուն միջնակեր և տալիս կռվելու մորեխի, մկան և դյուզատնտեսության այլ վնասատուների դեմ։

Մենք միշտ և ամենուրեք հանդիպում ենք քիմիայի «ժողական» ձեռքին։

Թե՛ այն դեպքում, յերբ ածուխն այրվում, տաքություն և առաջացնում ու մոխիր դառնում, կամ թե յերբ փայլուն պինդ յերկաթը մթագնում և ժանդուվում և, կամ յերբ անշեղ կիրը կամ մարմարը Փշուռ ևն, յերբ նրանց վրա թթվուտ և լցվում, արտաղեկով ծանր ածխաթթու դազը, և յերբ հացահատիկից սպիրտ և սուացվում, այս բոլորը քիմիական յերեվուույթներ են։

Այս բոլոր ձևափոխումներն ու փոփոխությունները, յերբ վորևե նյութ կորցնելով իր հատկությունները մի այլ տեսակի նյութի յև փոխվում, կոչվում են քիմիական կերպարանափոխմենր։ Հետեվապես, քիմիան նախ և առաջ՝ մի գիտություն և նյութի կերպարանափոխումների մասին։

ՈՍՉՄԱԿԱՆ ՔԻՄԻԱ

Սակայն, քիմիան միշտ ել մարդու ոգուաներին չի ծառայում։ Դարեր շարունակ մարդիկ մի բուռն հարուստների, կապիտալիստների և կարգածառերին կամքով կովում են միմյանց դեմ։ Խոկ պատերազմում արդեն միմյանց խնայել չկա։ Այդուղի մարդիկ միմյանց հարվածում են ամենաուժեղ զենքերով։

Հնում մարդիկ կովում եյին քարե կացիներով, նեա ու աղեղներով, սակայն յերբ քիմիան սովորեցը երանց հանքից յերկաթ պատրաստել, հրապարակ յեկազ յերկաթից պատրաստեած զենքը՝ ոռերը, յերկաթե

ասպարը: Այդ դեռ բավական չեր: Պետք եր մարդկության համար մտածել մի ավելի վտանգավոր և կորըտարեր բան, վորով կարելի լիներ թշնամուն հարվածել շատ հեռվից: Յեվ քիմիան այդ խնդիրը լուծում ե: Նա ստեղծում ե վառող և պայթուցիկ նյութեր:

Հանդես ե գալիս հրացայտ զենքը—հրացանը, թնդանոթները, վորոնք սկզբում անձոռնի եյին, անհարմար, հեռուն չփող, սակայն հետագայում նրանք դարձան հսկա, հարմար, արագ և հեռահար հրանոթներ: Հասարակ, սե, «վորսորդական» վառողի փոխարեն հրապարակ են գալիս սարսափելի ուժի նոր վառողներ, նոր պայթուցիկ նյութեր, վորոնցից սկսում են հրանոթային արկեր, նոնակներ և ոռմբեր պատրաստել: Այդ գորավոր նյութերը պողպատե հրանոթներից արկերը նետում են տասնյակ վերստեր հեռու:

Պատերազմը փոխվում ե խսկական սպանդանոցի, վորտեղ հաճախի նույնիսկ չես նկատում թշնամուն, չըդիտես թե վորտեղից են կրակում: Ով մասնակցություն ե ունեցել անցյալ պատերազմին, այդ մասին կհիշի:

Այդպիսի սարսափելի պատերազմը հնարավոր դարձավ քիմիայն չորսհիլ ռազմական—չար քիմիայի ձեռք բերած նվաճումների, այն քիմիայի, վորն ոգտագործեց խաղաղ—բարի քիմիայի նվաճումները: Բարի քիմիան խաղաղ նպատակների համար ձեռք եր բերել ամրապինդ մետաղաձուլվածքներ: Ռազմական քիմիան այդ ձուլվածքներով պատրաստեց ժամանակակից պատերազմի համար զանազան հրանոթներ: Խոկ վորպեսզի կարելի լինի այդ հրանոթներով կրակել, ուղարկան քիմիան պատերազմողներին մատակարարում ե հսկայական զորության պայթուցիկ նյութեր:

ՊՈՅԹՈՒԻՑԻԿ ՆՑՈՒԹԵՐ

ա) Սեվ ծխատու վառող


Ամենքին հայտնի յե, վոր յեթե մի բուռն հասարակ, վորսորդական վառողը, վորը բաղկացած ե ածուխի, ծծումբի և սելֆտրայի խառնուրդից, վառենք, իսկույն կայրվի: Սակայն, յեթե նույն այդ վառողը լցնենք փամփչտի պարկումը, պինդ փակենք վերջնիս բերանը և քցենք նրան խարույկի մեջ, պայթյուն կառաջանա: Դրա պատճառն այն ե, վոր վառողը տաքանալով միանգամբ վերլուծման ե յենթարկվում և առաջացնում մեծ քանակությամբ ամեն տեսակի գաղեր, վորոնք պայթեցնում են պարկումը:

Միմիայն այդ վառողը չե, վոր ունի պայթուցիկ հատկություններ: Կան նաև այլ տեսակի շատ նյութեր, վորոնք վառվելիս կամ վորեե բանի դիպչելիս պայթում են: Բոլոր այդ տեսակի նյութերը, վորոնք ընդունակ են արագ կերպով գագ դառնալու, կոչվում են պայթուցիկ նյութեր:

բ) Անծուխ վառողներ

Այժմ սե վառողի փոխարեն գործ են ածում այսպես կոչվող անծուխ վառող: Այս վառողը պայթում ե վոչ թե կայծից, ինչպես սե վառողը, այլ մի ուրիշ պայթուցիկ նյութի—ճայթիչի (գետոնատոր) պայթելու գործողությունից, այն ճայթիչի, վորն իր հերթին պայթում ե հարվածից: Պայթելիս այդ վառողը գառնում ե ահադին քանակության գագեր և նա համարյա թե ծուխ չի տալիս: Պայթյունից ստացվող գագերը հրանոթների փողաբերանից ուժգին կերպով դուրս են նետում արկերին:

Կան արքպիսի ամծուի վառակների շատ և շատ
տեսակներ, և յուրաքանչյուր պետություն ամի իր
հատուկ տեսակները։ Դրանք սովորաբար պատրաստ-
վում են խիստ պայթուցիկ նյութից—հրաբաժակից
(պիրոկսիլին), փորս յերբեմն կոչվում են շառա-
շուկ բամբակ, փորսիչետե այդ նյութին ստացվում է
հատուկ մշակման յենթարկելուց այն բամբակը, փորսից



նկար 1.

Յերկաթուղային կամուրջ, փորս պայթեցրել են գերմանացիները
1927 թ. Գրանիսական ճակատում։ Կամրջի չափ մասը ցույց և
արգած ավերելուց հետո, նրան վերականգնելու պրոցեսի
ժամանակ

պատրաստում են սովորական բամբակ։ Ամծուի վա-
ռողներ պատրաստելու համար յերբեմն դորձ են ածում
նաև խիստ պայթուցիկ մի հեղուկ—նիտրոգլիցերին,
նույնպես և մի շարք այլ նյութեր։ Բացի դրանից, նիտ-
րոգլիցերինը ծախսում են պատրաստելու համար այն
գինամիտը, վորն առաջվա ժամանակներում հաճախ
դորձ ելին ածում հեղափոխականները դարական չինով-

նիկաներին վոչնչացնելու նպատակով սումբեր պատրաս-
տելու համար։ Դինամիտը մի առանձին տեսակի հօդ
է, վորն իր մեջ նիտրոգլիցերին ունի ծծած։ Խաղաղ
ժամանակում դինամիտը դորձ և ածվում լեռնային տե-
սակները քար ու քանդ անելու և կոճղեր արմատահան
անելու համար։

Հրետանային արկերը, ձեռքի նոնակները, ֆու-
կաները, ստորջրյա ականները և աերոպլանային ոռում-
բերը լցնելու համար դորձ են ածում ավելի մեծ ուժի
այլ տեսակ պայթուցիկ նյութեր, վորոնք պայթելիս
արկի պատերը ցրիլ են տալիս հազարավոր մանր մա-
սերի, իրենց շուրջը մեծ ավերմունք առաջացնելով։
Այդ պայթուցիկ նյութերը վաղուց չե, ինչ դուել են—
նրանք սրանից մի քանի տասնայկ տարի առաջ են ըս-
տեղծվել։ Անցյալ պատերազմում գրանցից վործ ելին
ածում մեծ քանակությամբ։ Ով պատերազմում յեղել
է, անշուշտ լսած կլինի մելինիտի և տրոտիլի մասին
և գիտե, թե ինչ ավերիչ ուժ ունեն այդպիսի նյութե-
րով լցված արկերը։ Կան նաև այլ տեսակի պայթուցիկ
նյութեր, վորոնցով ականներ և արկեր են լցնում,
ուկայն, այդ յերկուսն են ամենագլխավորները։ Դր-
րանք պատրաստվում են քարածիխ ձյութից, վորի թո-
րումից ստացվում են մի տեսակ նյութեր, վորոնց քի-
միական գործարաններում համապատասխան մշակման
յենթարկելուց հետո ստանում են տրոտիլ և մելինիտ։

ՃԱՅԹԻՉՆԵՐ (ԴԵՏՈՆԱՑՈՒՆԵՐ)

Ներկայումս գործածվող պայթուցիկ նյութերի մեծ
մասը կրակից կամ հասարակ հարվածից չի պայթում։
Դրանց պայթեցնելու համար հարկավոր է՝ փշրտելու

մեծ ուժ ունեցող հարևան մի այլ պայթուցիկ նյութի
պայթյուն։ Այդ վերջին նյութը հարվածից դյուրու-
թյամբ ե պայթում։ Այդպիսի պայթուցիկ նյութերը կոչ-
վում են պայթյուն առաջացնող նյութեր կամ նայթիշ-
ներ։ Այդ նպատակի համար ամենից շատ գործ ե ած-
վում շառաչուկ մնդիկը, վորից մի փոքր դրվում ե պա-
տիճի (պիտոն) մեջ։ Պատիճը դրվում ե հրանոթի կամ
հրացանի փամփուշտի մեջ։ Արձակյուն առաջ բերելու
համար զարկանով հարվածում են պատիճին։ Շառա-
չուկ մնդիկը պայթում ե։ Վերջինիս պայթյունից պայ-
թում ե փամփուշտի անծովս վառողը։ պայթյունի հե-
տեւվանքով փողաբերանից դուրս ե թուչում հրետանային
արկը։

Արկը վորոշ տարածություն թռչելուց հետո ընկ-
նում ե ցած և միշտ ել գլխի մասով, վորտեղ զարկանն
ե գտնվում, դիպչում ե գետնին։ Այդ զարկանը նորից
հարլածում ե արկի ծայրին գտնվող պատիճին, իսկ
պատիճի պայթյունն առաջ ե բերում պայթյուն այն
տրոտիլի կամ մելինիտի ամբողջ մասսայում, վորոնցով
լցված ե արկը։ Նույն ե տեղի ունենում նաև ստորեր-
կրյա ականներում։ Միայն թե այստեղ պատիճի պայ-
թյունն առաջ ե գալիս ականի՝ անցնող նավի պատերին
դիպչելուց։ Ճիշտ այդպէս ել պայթում են աերոպլան-
ներից նետվող սումբները, յերբ նրանք գետնին են
դիպչում։

Յեթե անհրաժեշտ ե, վոր արկը պայթի գեռես
գետին չհասած, այդ դեպքում նրա գլխին հատուկ
հարմարանք ե պատրաստվում։ Պատիճը կամ թե ինչ-
պէս առվում ե, հրապատինը (կապայուլ) այդ ժամա-
նակ միացնում են հիմնական լիցքին խողովակի մի-

ջորվ, վորը լցված ե դանդաղ վառվագ սև վառողով։
Հատուկ հարմարանքով կարելի յե կարճացնել կամ
յերկարացնել վառվող վառողի ժապավենի յերկարու-
թյունը։ Վառողը առանձին մեխանիզմով վառվում ե
արկի թռչելու ժամանակ կամ թե աերոպլանային ոռու-
թի ընկնելու սկզբին։ Յերբ վառողը մինչև վերջը վառ-
վում ե, նա պատիճին պայթեցնում ե գեռմս արկը գե-
տին չընկած։ Այդպիսի բարդ խողովակները կոչվում
են հեռակայության (դիստանցիօն) փողակներ, քանի
վոր նրանց գործունելյությունը հաշվի յե առնված վո-
րոշ հեռավորության—հեռակայության համար։

Պատերազմի ժամանակ ծախսվում են շատ ուղմա-
նյութեր, մասնավանդ պայթուցիկ նյութեր։

Միմիայն Գերմանիան մեկ տարվա մեջ ծախսել ե
մինչև 15 միլիոն փուլթ պայթուցիկ նյութեր։

Մենք այստեղ թվեցինք միմիայն հիմնական պայ-
թուցիկ նյութերը և նրանց գործադրման ամենապարզ
յեղանակները։ Սակայն այդ ել բավական ե հասկանա-
լու համար, թե ինչ հսկայական նշանակություն են
ունեցել նրանք և ունենալու յեն պատերազմում։ Ուղ-
ղակի կարելի յե ասել, վոր առանց պայթուցիկ նյութե-
րի այժմ վոչ մի պատերազմ լինել չի կարող։ Այն պե-
տությունը, վորը բավականաչափ այդպիսի նյութեր չի
ունենալու, շատ չուտով կհաղթվի թշնամու կողմից։

Ուստի, յեթե մենք ցանկանում ենք, վոր մեր Խոր-
հրդային Միությունը ամուր լինի և անվախ նայի իր
բազմաթիվ վոխերիմ թշնամիների աչքերի մեջ, պետք
ե աշխատել, վոր մեր Կարմիր Բանակը ունենա շատ
պայթուցիկ նյութեր։

Այդ ինչպէս պետք ե անել, մենք ստորև կտեսնենք։

ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ

Պատերազմում լինայել չկա .—Կովող կողմը մըշտապես աշխատում է , վորքան կարելի յե շատ կորուստ ուստածառել թշնամուն : Առաջնաբում մարդիկ միմյանց չարվածում ելին սառը զենքով , հետո յերբ ձեռք բերեցին վառողոք , ակսեցին միմյանց մեծ հեռավորություններից գնդակոծել , իսկ ներկայումս այդ ելքիչ համարեցին և սկսեցին միմյանց թունավորել : Արեհերը , ոռումբերը , նոնակները սկսեցին լցնել զանազան թունավոր նյութերով , վորոնք արկի պայթելու ժամանակ այս ու այն կողմը թուչելով և ցրիվ դալով թունավորում են ողը և գրանով ել՝ ողում գտնված մարդկանց : Թունավոր նյութեր կարող են լինել ողում արկի պայթյունից հետո գաղի (գոլորշու) կամ մառախուղի խիստ մանր կաթիների կամ նուրբ փոշու ծիփ կերպարանքով : Հեղուկ թունավոր նյութերով նույնպես կարելի յե վարակել գետինը , թափելով նրան սավառնակներից կամ գնդակոծելով արկերով , վորոնք պարունակում են հեղուկ քիչ ցնդող թունավոր նյութեր :

Ի՞նչ է գաղը կամ գոլորշին

Յերբ ջուրը գտնվում է բաց ամանում , նա հետզհետեւ ցնդում ե կամ ինչպես ասում են , գոլորշիանում և —գոլորշի (գաղ) ե դառնում : Զրային այդ գոլորշին խառնվում ե ողին և տարածվում ե ամեն կողմ : Այսպիսի ող ներշնչել , վորն իր մեջ ջուր ե պարունակում երբև գոլորշի , կարելի յե առանց վնասվելու : Սակայն , յեթե ջրի փոխարեն սենյակում մենք վորեե թունավոր հեղուկ գոլորշիացնենք , այդ դեպքում թունավոր դո-

րուշիները ողի հետ միասին կընկնեն թոքերը և մարդուն կթունավորեն :

Համարյա ամեն մի պինդ նյութ տաքացնելիս սկըրբում հալչում , գառնում ե հեղուկ , ապա յեռում և ցընդում ե կամ գառնում ե գազ (գոլորշի) : Ուրեմն նյութը կարող ե լինել պինդ , հեղուկ և գոլորշու կամ գաղի դրությամբ : Որինակ , սառույցը կամ ձյունը տաքա-



Նկար 2.

Առաջին գաղային գրոհը ֆրանս-գերմանական ճակատում
1915 թվին

ցնելիս դառնում ե հեղուկ՝ ջուր , իսկ ջուրը տաքացնելիս արդեն գոլորշիանում , ջրային գաղ կամ գոլորշի յե դառնում : Էնդհակառակն ջրային գոլորշին սառցնելիս ստացվում ե հեղուկ՝ ջուր , իսկ վերջինս սառցընելիս ստացվում ե սառույց : Այդպես ել մոմը , ծծումբը և այլ նյութերը կարող են լինել պինդ , հեղուկ և

գաղանման և մեկ դրությանից վախվել կարող են ժի ուրիշ դրության: Սակայն, այն ջերմությունը, վորով նյութը մեկ դրությունից մյուս դրության և անցնում, յուրաքանչյուր նյութի համար տարբեր է: Սառուցը հալչում ե զերո աստիճանի տակ: Մոմը հալչում ե այն ջերմության աստիճանին, յերբ ջուրը յեռ ե դալիս. իսկ թուջը (չուգունը) հալչում ե այն ժամանակ, յերբ նրան տաքացնում են մինչև սպիտակելը: Նույնն ե նըկատվում նաև, յերբ նյութերը հեղուկ վիճակից գաղային են գառնում: Զուրը յեռ ե գալիս 100 աստիճան ջերմության տակ, սպիտը յեռում է, յերբ նրան քըցում են 80 աստ. տաք ջրի մեջ, ջուր յեռ կդա յեթի նրան լցնենք խիստ տաքացած, դեռևս չյեռացած յուղի վրա: Իր հերթին, այն ողը, վորով մենք չնչում ենք, կարելի յե խտացնել և դարձնել հեղուկ, յեթե նրան չառ խիստ սառեցնենք: Նույնիսկ կարելի յե նրան սառեցնել մինչև պնդանալը:

Ջրի գոլորշինալը կարելի յե կանդ առնել տալ լցնելով նրան պինդ փակված շի մեջ: Ճիշտ այդպես ել թունավոր նյութերը կարելի յե սառեցնելով, սառնաժանիքի ճնշման յենթարկելով դարձնել հեղուկ և լցնել պողպատե շշերի մեջ: Այդպիսի շշերում, յեթե նրանք փակված են, թունավոր նյութը, հեղուկ դրությամբ կարող ե պահպանվել շատ յերկար ժամանակ: Բայց ճենց վոր այդ շշերը բաց անեն, մանավանդ տաք տեղում, թունավոր նյութը նույնպես կսկսի արագ դորչիանալ և դուրս գալ շից իրու գագ:

Մարտական քաւմավար Այսուհեր—քաւմավար «գաղեր» Յեթե թունավոր հեղուկը գոլորշիանում է, օտացվում են թունավոր գոլորշիներ—թունավոր «գաղեր», լորոնք խառնվելով ոդի հետ վերջինիս միջոցով մըտ-

Նկ. 3

իպրիտի ներգործությունը
մարդու մարմնին: Մարմնի
վրա իպրիտի առաջացրած
վերքը՝ իպրիտը մորթու
վրա ընկնելուց 4 որ հետո



նում են մարդու կամ կենդանու թոքերը և նրանց թունավորում: Ներկայումս այդպիսի թունավոր «գաղեր» են սկսել գործածել բանվորների գեմ կապիտալիստները: Արդեն անցյալ պատերազմին հրետանային արկերի մոտավորապես կեսը պատրաստված եյին թունավոր նյութերով և այժմ, պատերազմի դեպքում նրանք նույնպես ամեն տեսակի թույներ են պարունակելում

Անցյալ պատերազմի հենց սկզբին դեռևս գործ եյին ածում պողպատե շեր, վորոնք լցվում եյին հեղուկու ցրած գաղերավ: Այդ շերից կամ գաղագնդերից (բար-լոններից) ողի մեջ եր բաց թողնվում գաղը, վորը քա-ժին քշում, տանում եր դեպի թշնամին:

Վոչ ամեն մի նյութ, վորը թունավոր հատկու-թյուն ունի, կարելի յի գործածել մարտական նպա-տակների համար: Անհրաժեշտ է, վոր այդ նյութը նախ և առաջ հարկ յեղած դեմքում ողում մնալ կարողանա, ցրիվ չդա և չկորցնի իր թունավոր հատկությունները: Ելդպիսի թունավոր նյութերը կոչվում են մարտական նյութեր:

Գատերազմի ժամանակ գործ եյին ածվում շատ զանազան տեսակի մարտական թունավոր նյութեր: Նրանցից մի քանիւր, որինակ քլորը և ֆուզինը խեղ-դում եյին, զրա համար եւնրանց անվանում եյին խեղ-դոր նյութեր. գրանցից մի քանի տեսակներն եւ թու-նավորում եյին՝ ներքին որդաններում վերք առաջա-նելով, թափանցելով մարդու արյան մեջ. այդպիսի-ները կոչվում եյին բունավոր նյութեր. կային նաև աչքերը փչացնող նյութեր, վորոնք աչքերից հեղեղի նման արցունք եյին հոսեցնում և սաստիկ աչքացալից ժարդիկ ստիպված եյին լինում փակել աչքները—ժա-ժամակավորապես կուրանալ. գրանք կոչվում եյին ար-սասլարեր նյութեր: Արդեն պատերազմի վերջին հը-րապարակ յեկան այնպիսի գաղեր, վորոնցից մարդու ժորթը պատում եր պալարներով և վերքերով, գրանք ստացան պալարատու նյութեր անունը և վերջապես պատահական արդություններ, քթի արյուն-

հոսություն և նույնիսկ վախումներ եյին առաջ բե-րում. այդպիսի գաղերը կոչվում եյին վոշտացնող գաղեր:

Այդ բոլոր նյութերից ամենաթունավորը պալա-րատու թունավոր նյութն է, վորը կոչվում է խպիտ: Այդ մի տեսակ թունավոր հեղուկ է, վորն ուստեւով մորթը, առաջ և բերում պալարներ: Այդ հեղուկի գո-րծություններն ունեն խիստ թունավոր ներգործություն: Բացի այս գաղաղ և գոլորշիանում, վորի պատճա-ռով ել նա կարող է հողի յերեսին մնալ 5-10 որ և ա-վելի, նայած յեղանակին: Այդ գործ են ածում նույն հրետանային արկերի և աերոպանների ուուժքիրի հա-մար: Նրան կարելի յի նաև շադ տալ աերուղաններից: Յուրաքանչյուր բանվոր և զյուղացի պետք և մտքում ածուր պահի «խպիտ» բառը, վորովհետեւ յիթե որա-տերազմ ծագի, կապիտալիստներն առաջին հերթին այդ սարսափելի նյութն են մեզ վրա բաց թողնելու:

Մարտական թունավոր գաղերի գործածությունը

Ովքեր ձականում յեղել են, լավ են հիշում, թե ինչպես անցյալ պատերազմի ժամանակ սկսեցին «գո-րծիք» գործածել:

Այդ գաղերն եյին արգեն ցույց տրված էլորի ու փոսքին: Դրանց գաղ եյին անվանում այն պատճառով, վորովհետեւ նրանք շատ ցնդող եյին և ձականում գործ եյին ածվում գաղային դրությամբ: Այդ գաղերը ճակատ եյին քերգում հեղուկացված դրությամբ հա-զարավոր պողպատե շերի մեջ լցրած, վորոնք շարվում

Եյին խրամատների գծի վրա։ Յերբ սկսում եր բարեհաջող քամի փչել գեպի թշնամին, շները բաց եյին անում և թունավոր դազը (քլորը կամ նրա և ֆոսդենի խառնուրդը) դուրս եր գալիս ողի մեջ և միապաղաղ դաշային ամպի կամ ինչպիս ասում են գազային ալիքների հնան իջնում եր թշնամու վրա, իրարանցում և մահ եր առաջացնում։

Սակայն բանից յերեաց, վոր գազերի գործադրման այդ յեղանակն այնքան ել հարմար չեր, քանի վոր քամին հաճախ փոխում եր իր ուղղությունը և գազերը քում եր դեպի սեփական դիրքերը, և բացի գրանից, պետք եր լինում շատ գժվարին նախապատրաստական աշխատանք կատարել, վորպեսզի հնարավոր լիներ մեծ քանակությամբ ծանր պողպատե գազաղնդեր կրրել և շարել։

Այդ ժամանակ սկսեցին գործածել մի տեսակ հրանոթներ, վորոնք կոչվում եյին զազանեաներ կամ քիչիական ականանեաներ և վորոնք հեռու տարածության վրա նետում եյին թունավոր հեղուկներով լիքը մեծ ականներ։ Այդ ականները մեծ քանակությամբ թռչնելով և թշնամու խրամատներին հասնելով պայթում եյին։ Նրանցում յեղած թունավոր հեղուկը պատե պատ կպչելով, արագորեն գոլորշիանում եր, առաջ եր բերում ողի խիստ թունավորում և դրանով դժանդում եր ժարտիկներին։

Նույնպես սովորական հրետանային արկերը սկսեցին լցնել թունավոր նյութերով։ Ականների և արկերի մեջ այնքան պայթուցիկ նյութ եյին լցնում, վոր արկը կարողանար պայթել և թունավոր նյութը կարողանար դուրս հասել և գոլորշիանալով ողը թունավորել։

Սակայն պատերազմի վերջին հրապարակ յեկան նաև հրետանային այնպիսի արկեր, վորոնք իրենց մեջ թունավոր նյութ պարունակելու հետ միասին, ունեցին նաև պայթուցիկ նյութերի բավականաչափ լիցք։ Այդպիսի արկերը պայթելիս վոչ միայն թունավորում, այլև իրենց բեկորներով եյին խփում։

Ապագա պատերազմում այդ բեկորավոր-քիմիական արկերը խիստ շատանալու յեն։

Ավիացիա

Թունավոր նյութերը կարող են մեծ չափով գործածվել նաև ավիացիայում, վորը վերջին տարիները շատ զարգացել է։ Բոլոր պետությունները պատերազմից հետո շարունակեցին անընդհատ ավելի և ավել լավ հատկության սավառնակներ կառուցել։

Ֆրանսիան ներկայումս ունի ամենաուժեղ ողային տորմիղ, վորն ունի մոտավորապես 2000 հատ զանապան չափի, լիակատար մարտի պատրաստ սավառնակներ։ 1930 թվին այդ թիվը հասցվելու յե 3000-ի։

Պատերազմի դեպքում ֆրանսիայի ավիացիայի գործարանները կկարողանան կարճ ժամանակմիջուցում արտադրել շատ մեծ քանակությամբ սավառնակներ, վորոնք վոչ միայն կկարողանան լրացնել ողային տորմիղի կորուստները, այլև կմեծացնեն սավառնակների թիվը։

Այլ յերկրները—Անգլիան, Իտալիան, Ամերիկան, Շապոնիան—աշխատում են ֆրանսիայից յետ չմնալ։

Այժմյան սավառնակները հներից անհամեմատ լավ են։ որանք ավելի արագընթաց են և ունեն միջին հաշ-

գագ մեկ ժամում 160
 —200 վերստ արագու-
 թուն. սրանք պիելի
 վերև կարող են բարձ-
 րանալ՝ մինչև 5—6
 վերստ, կարող են ա-
 վելի ծանրություն տա-
 նել՝ միջին հաշվով
 50—60 փութ. կարող
 են ավելի ճեռուն
 թուշել՝ 500-600 վերստ
 գեաի թշնամու թի-
 կունքը և յետ:

Մեր սավառնակները
 թշնամու ռախառնակ-
 ներից վատ չեն. Այդ
 մենք, որինակ, ապա-
 ցուցել ենք այն մեծ
 թոփչքներով, վոր կա-
 տարել են խորհրդակին
 սավառնակները և մո-
 տունները. Մոսկվայից
 գեաի Զինաստան (Պե-
 կին) և ապա 1926 թ.
 տմառը՝ ամբողջ Յել-
 լոպալում: 1927 թվին
 ԽՍՀՄ-ի ողարին տոր-
 միզը Մոսկվայից դեպի
 Տակիո (Ճապոնիա)
 և յետ ընդամենը
 մոտավորապես 2000
 վեր.) կատարած թոփչ-



Նկ. 4. Արագ սավառնակներից բաց թողած ծխութեանից: 1924 թ. կուտարկած մի փոքր

քով, ինչպէս և միաժամանակ ԽՍՀՄ-ի զանազան վայ-
 րերից գեպի Մոսկվա կատարված բազմաթիվ սավառ-
 նակների հսկայական թոփչքով («Աստղային թոփչք»)
 ապացուցեց, վոր մեր կառուցած սավառնակները, մեր
 մոտոռները յեփրոպականից վատ չեն և թերես ավելի
 լավ են: Մեր ողաչուներն իրենց տոկությամբ, գոր-
 ծի հասկացողությամբ և անվախությամբ վոչ միայն
 վատ չեն, այլ նույնիսկ ավելի լավ են արտասահման-
 յան ողաչուներից:

Մենք այժմ յետ ենք մնում նրանցից միմիայն մեր
 սավառնակների և մատոռների քանակով, պակաս ե
 նույնական մեղ մոտ Փարբիկաների քանակը. սակայն
 այժմ, յերբ մենք արդեն հասել և անցել ենք այն դրու-
 թյունից, ինչ վոր կար մինչև պատերազմը, կարող ենք
 ուրեմն վախ չունենալ: Մեր ողային տորմիղը վոչ մի-
 այն լավանում ե, այլև արագ կերպով աճում ե և մենք
 հավատացած ենք, վոր հեռու չե այն ժամը, յերբ մենք
 վոչ միայն կհասնենք, այլև կանցնենք բուրժուազիա-
 յից:

Ավիտացիան թունավոր նյութեր և գործ ածելու զա-
 նազան յեղանակներով: Սավառնակներն ուղակի կարող
 են թունավոր հեղուկ թափել յերկրի վրա կամ թու-
 նավոր նյութերով լցված ուղմբեր քցել:

Մանավանդ վտանգավոր են լինելու քաղաքների,
 գործարանների, Փարբիկաների, յերկաթուղային կա-
 յանների վրա և այլն անդի ունեցող հարձակումները:

Անցյալ պատերազմում նույնական ողային արշավ-
 ներ եյին անդի ունենում, սակայն դրանք լինում եյին
 հազվադեպ, վորովհետեւ սավառնակները դեռևս վատ

Եին և մեծ ծանրության ռազմական բեռ չելին կարողանում տանել:

Ողային արշավից պաշտպանվելու համար, պետք է պատրաստ ունենալ սավառնակ-ավերիչների ամբողջ ջոկատներ, վորոնք պետք է հարձակվեն և վոնչացնեն թշնամու այն ծանր ողանակերը—ոժբակիթները, վորոնք մեծ քանակությամբ պայթուցիկ և թունավոր նյութեր են տանում: Բացի դրանից, բոլոր կարևոր կետերին մոտիկ պետք է լինի գենիթալին բազմաթիվ թնդանոթներ ունեցող հրետանի, վորը դեպի վեր, ողային նշաններին ե կրակում: Սակայն այլ գեռ բարգական չե: Անհրաժեշտ ե, վոր ամեն մեկն իրեն պաշտպանել կարուղանա: Անհրաժեշտ ե թունավոր նյութերից պաշտպանվելու համար ունենալ հատուկ քիմիական պաշտպանություն:

ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Գաղերից» պաշտպանվելու միանդամային հնարավոր բան ե. միայն թե հարկավոր և նրա համար առաջնորդ պատրաստվել:

«Գաղերից» պաշտպանվելու համար մարդիկ կոմպետք ե քաշվեն մաքուր ող ունեցող և ամեն կողմից լավ կալնված շենք, կամ թե իրենց մարմինը և յերեսը ծածկեն առանձին հակառակային հաղուստով և դիմակով:

ԳԱՊԱՎԱՍՏԱՐԱՑԻՆԵՐ

Գաղերը կարող են մուտք գործել ամեն անդից՝ ողոների և պատուհանների արանքներից: Աւրիմն, հարդական կամոր և շենքը լավ կանել: Ոչը պետք է ներծծվի այն կամոր և շենքը լավ կանել:

արկղի մեջ, վորոտեղ գտնվում են հակառակային նյութերը, վորոնք ողը մաքրում են այստեղ գտնված թունակութիւնը: Այդպիսի շենքերը կոչվում են գաղապաստարանները: Այդ գաղապաստարանները պետք ե պատրաստել առաջուց, վորովհետև հետո դժվար կլինի այդ անել, առաջնամին վերևից՝ սավառնակներից սկսի գաղացիքը թշնամին վերևից՝ սավառնակներից սկսի գաղացումքը թափել:

Քաղաքների, Փարբիկաների և յերկարուդիների պաշտպանությունը

Պետք ենախապես պաշտպանել անդերը, վորոնց վրա թշնամին հարձրելվելու յի առաջին հերթին: Յուրաքանչյուր քաղաքում, Փարբիկայում և կարեոր յերկաթուղու կախաններում պետք ե գոյություն ունենան հատուկ շենքեր, վորոնք գագի համար անթափանցելի լին և ունեն ողամաքրիչներ ու այլ հարմարանքներ: Պետք ե նաև նախապես պատրաստել հատուկնյութեր, վորոնք ցանցում են թունավոր նեղուկներով բոնած տեղերը և նրանց անվանությունը դարձնում է պետք ե սովորեցնել բնակչության այդ նյութերին շնչելու տեղը՝ հակառակով:

Ակ. 5.




թի գործադրությունը։ Այս ամենը շատ մեծ աշխատաք է, վորը ժամանակ և պահանջում է Ռւբեմն անհրաժեշտ և հենց այժմ անցնել վործի։

Վորպեսղի կարելի լինի անվտանգ դարձնել այն գետինը, ճանապարհը կամ չենքը, վորոնք վարակված են այսպես կոչվող իպրիտ թունավոր հեղուկով, պետք է վարակված տեղերի վրա ցանել մի տեսակ առանձին փոշենյութ, վորը ինքը կամ շպարի (բելիլա) կիր և կոչվում։ Յուրաքանչյուր քառակուսի սաժեն վարակված տեղի համար զրանից գործ են ածում 2-3 ֆունտ։ Քլորակիրը կարելի յե սկզբում ջրի մեջ լուծել և ապա տեղն անվտանգ գարձնելու համար գործածել իրեն թոնձը հեղուկ։

Հակագազեր

Բացի գազապատարաններից, վորոնք միաժամանակ կարող են ծառայել շատ մարդկանց համար, յուրաքանչյուր մարդ, վորն իր յերկար տեղող ծառայության պատճառով չի կարող հեռանալ իր պոստից և թագնվել զաղապատարանում, պետք է ունենա հակագազ, վորպեսղի դագային վտանգի դեպքում քաշի գըրին։ Հակագազը բաղկացած է դիմակից, վորը ծածկում է գեմքը և մաքրող սուսիրից (փամփուշտից), վորը միացած է դիմակի հետ։ Այդ տուփում դտնվում են հակագազային նյութեր, վորոնք ողից խլում են թույնը և այդպիսով մաքրում և անվտագն են գարձնում շնչելու համար։ Բացի պլմի հակագազից, վորը պաշտպանում է մարդու շնչառությունն ու աչքերը, անհրաժեշտ են նույնպես հատուկ հակագազային հագուստներ, վորպեսղի կարելի լինի ամբողջ մարմինը պաշտպանել թու-

նավոր նյութերից, վորոնք մորթի վրա վերքեր են առաջացնում։ Այն հակագազը, վորի ոգնությամբ մեզանում սովորում են այդ միջոցով պաշտպանել շնչելու տեղերն ու աչքերը։ «Գազերից», կոչվում է Տ/Տ։ Ստորև զետեղված ե զրա նկարագրությունը և բերդած են դրանով ոգտվելու կանոնները։



Նկ. 6.

ՀԱԿԱԳԱԶ Տ/Տ₄

Նշաններ

1. Հակագազային տուփ
2. Կորդակ (ալեմ)

3. Ակնաց.
 4. Կորդակի վրա մասնաձեւ մի պնդիկ ակնացը
 - ներսից սրբելու համար.
 5. Միացնազ գարմանաձեւ (ծալքավոր) խողովակ
 6. Յեռածայր խողովակ.
 7. Արտաշնչման փական.
 8. Տառիկ մերկի բուկ.
 9. « զածի »
 10. Ներշնչման խցան—փական.
 11. Պայուսակ.
 12. Կապիչ.
 13. Ավզուկ (պրյայկա)
 14. Պայուսակի փական.
 15. Կոճակներ.
 16. Ավզուկներ (սպակներ).
 17. Այն գիծը, զուրի ուղղությամբ ներսից կարված և միջնորմ, զորը սպայուսակին բաժանում և յերկու մասի. վրոնցից աջը տուքի համար և, ձախը՝ կորդակի համար. աջ մասի հատուկում հմաքրածն ե.
 18. Հակազազը յերթի զատու զբությամբ.
 19. Հակազազը հագած.

Հակագագի նկարագրությունն ու նրանով
ոգտվելու կանոնները

ժիշտ տեղափորված տուփի մեջ։ Տուփի ցածի ցանցի և ցանցի խը-
մանի տրանքում դրված և զպանակը, վորը նախանշանակված է
ալլանին առարկանաբար սեղմելու և զբանով և պաշտպանելու ա-
համար։ Համար մանրանաբար ցցցվելու ժամանակի՝ Շնչառության
գույքության համար հակադաղում կան ներհնչան ու արտաշնչ-
ան փականներ։ Գրանցից առաջինը (10) մի սետին ըթյանակ է,
վորը դրված և մետաղե հիմքի լոցանի դրա, վորը մացված է
տուփի ցածի լույսը (9)։ Արտաշնչան փականը (7) նման և կը-
տրված անկյուններով հարթ ուղիղն առպատկի՝ ամբացված մե-
տաղե խողափակի պինթիկին, վորը միացնում և կօրդակը զարդո-
ւածի խողովակին։ Մեքենական փասումներից և զործողության
կանոնավորությունը խանդարվելուց ապահովելու համար ար-
տաշնչան փականը դրված է (վորոշ տեսակներում) հատուկ ժե-

Հակագաղի նկարագրված ժամանքը գրպատմ են բրեգենտե պարունակությունը (11) մեջ, զարդ ունի յերկու բաժանմունք՝ մեկը տուփի, մյուսը կորզակի համար։ Տուփի համար նախանշանակված է առանձունքը, իր հատակում ունի յերկաթաթելք հենարան, գրք ողին թույլ և տալիս ազատ մուտք գործել տուփի մեջ և գրանով է, թույլ և տալիս հակագաղով ողտովելու, նրա տուփը պայուսակից դարձն չըկերտով։

Հակագաղից ոպավելու կանոնները նախառեսում են նրան
հազնել յերկու գրությամբ: Առաջինը՝ «յերթի» գրությունն է,
յերբ անժիշտական քիմիական սպառնալիք չկա: Յերկրորդը՝ «պատ-
րաստի» գրությունն է, յերբ այդպիսի սպառնալիք գոյությունն
ունի և հարկավոր և պատրաստվել նրան հականարկած տալու:
Յերթի գրությամբ (18) կոճկված փականով պայտուսակը (19)
կախվում է կողքից, սովորաբար ձախ կողքից, կապիչ միջոցով
(12), գորը զդում և աջ ուժի վրայից: Բացի զքանից պայտուսա-
կը պետք է կողքի վրա հատի այն կոզմով, մասի վրա կարգած են
ավագ կնիքը (ողակ): (16): Կապիչի յերկարությունը կանոնավոր-
ված և ավագութի (13) միջոցով, այն հաշվով, մարզիկ կորեկտ
լինի, անհամարելաւթյան գետքում, պայտուսակն աղատ կերպով
շարժել մարմնի առաջին կոզմը, ձախ ձեռքը տանելով կապիչը
տակից: Հակագաղը «պատրաստի» գրության յերեւու ժամանակ
պայտուսակը շարժվում և վերը ցույց աված կոզմը: Պայտուսակի
կոճկակը արձակում են, կողքից կարճացնում են որի հաշվով, վոր

պայտուակն ընկնի փորի վերելի ժամի վրա. պայտուակից հանգում և նրան ամբացված և նրա ներսում դանգած լարանը, փորի միջոցով պայտուակն ամբացվում և մարմնին: (Դրա համար լարանն անց են կացնում մեկ ավզուկի (16) միջով, այնուհետև նըրանով թիկաները ձգում են և անց են կացնում յերկրորդ ավզուկը, վրանեղ և լարանն ամբացվում է: Հակագաղի այդ գրությամբ հաղողելու համար պետք է պայտուակից հանել կորդակը և նրան քաշել գլխին աճապես, վոր տիկնոցն ընկնի աչքի գեմ ու զեմը և դիմում ուստինից փոթեր շառաջանան (19): Յերթի գրությամբ հակագաղը հապնվում և նորին յեղանակներով, ինչ վոր պատասխան գրությանն անցնելիս և այդ գրությամբ հազնելիս, այս առարկը բարեկարգությամբ միայն, վոր այդ յեղանակների հաջորդականությունը մի փոքր այլ և պայտուակը բերելով մարմնի առաջն կողմը և բաց անելով պայտուակի հօճակը, պետք և իսկույն և յեթ հանել կորդակը, քաշել նրան զմիխն և միայն գրանից հետո կարճացնել կապիչը և պայտուակն ամբացնել մարմնին լարանով:

Հակագաղի մեջ շնչելիս, թունափորված դրսի ողը ներշնչման վահանից մտնում և հակագաղային տուփի մեջ, կանիչի մեջ թունափոր նյութերի խառնուրդը մաքրվում է, մտնում և կորդակի տակ, այնուհետև՝ մարդու ջանակը տեղերը: Արտաշնչվող (փշացած) ողը շեռացվում և անմիջապես ներշնչման փականի մեջով: Այդ տեղի յետնենում առ պատճառով, վոր ներշնչման փականը բացվում և միմիայն ներշնչելու ժամանակ, իսկ արտաշնչմանը՝ միմիայն արտաշնչելու ժամանակ: Այսպիսով ներշնչվող և արտաշնչվող ողը միմյանց շեն խառնվում (ինչպես այդ տեղի կունենար, յեթե արտաշնչվող ողը գնար այն ձանաղարհով, վարով ներշնչվողն եր գնում, այսինքն տուփի և ցածի րիհ միջով): և կարելի յետ հակագաղում շնչել ավելի հետ կերպով:

Այդպիսի հակագաղեր պետք ե պատրաստել դեռևս պատերազմն սկսվելուց առաջ, վորովհետեւ հետո ուշ կլինի: Գետությանը դժվար և ամրող բնակչության համար միանգամբից հակագաղեր պատրաստել: Այդ պատճառով անհրաժեշտ է, վոր ովքեր սահմանին մոտիկ են ապրում, իրենց համար իրենք այդպիսի հակագաղեր գնեն: Դրանք թանգ չեն, բնդամենն արժեն մի-

շանի սուրլի և գրանց ստանալ կարելի յեՊԱԶԸ-Ավեացի միջոցով: Այդ հակագաղերը կարող են ոգտակար ծառայություն մատուցել վեռևս պատերազմից առաջ, խաղաղ պայմաններում: այդ հակագաղերը կարելի յետ կազմել, յերբ գործ ունենք վնասակար փոշու կամ թունավոր գաղերի հետ, որինակ, յերբ այդիները ծծմբական:



Նկ. 7.

Համաշխարհային իմպերիալիստական պատերազմում գարծածված զանազան հակագաղեր՝ անդիմական, ֆրանսական ու սուսական բանակներում:

1. Ֆրանսիական խոնավ գիմակ Մ2
2. Անգլիական տուփավոր հակագաղ
3. Ֆրանսիական հակագաղ Տիսան
4. Ռուսական հակագաղ՝ Թելլնուկի-Կոմմունար

փոշի յենք փշում, կամ թե յերբ հատիկները թունափորժան ենք յենթարկում փորմափինով և կամ յերբ ամրարի վնասատուներին գուրս ենք հանում լորովիկրինով: կամ առնեաներին թունափորում ենք լորով:

Բացի դրանից անհրաժեշտ է հիշել, վոր Հակապա-
ղի մեջ գտնվելը և նրա մեջ՝ աշխատելն ու ման գալը,
